Լրատվամիջոցների խնդիրներին նվիրված՝ հարավկովկասյան 9-րդ համաժողով
Ավանդականից դեպի առցանց լրատվամիջոցներ. լավագույն փորձ և հեռանկարներ

Թբիլիսի, Վրաստան
11-12 հոկտեմբեր 2012 թ.

ՀՌՉԱԿԱԳԻՐ

Լրատվամիջոցների հարավկովկասյան 9-րդ համաժողովը, որը կազմակերպվել էր ԵԱՀԿ ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցչի գրասենյակի կողմից՝ ԵԱՀԿ Երևանի և Բաքվի գրասենյակների աջակցությամբ, տեղի ունեցավ հոկտեմբերի 11-ից 12-ը Թբիլիսիում:

Տարիների ընթացքում Լրատվամիջոցների հարավկովկասյան համաժողովը դարձել է լրատվամիջոցների խնդիրները քննարկելու և Հարավային Կովկասի լրագրողների միջև համագործակցության ուրույն ֆորում:

Երկօրյա համաժողովին մասնակցում էին Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ավելի քան 80 լրագրողներ, ԶԼՄ փորձագետներ, պատգամավորներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և գիտաշխատողներ:

Համաժողովի քննարկումը կենտրոնացած էր սոցիալական և առցանց լրատվամիջոցների վրա: Համաժողովի մասնակիցներն ուսումնասիրեցին սոցիալական լրատվամիջոցներում և առցանց հեռարձակման կանոնակարգերում մամուլի ազատության հետ կապված միջազգային չափանիշներին և ազգային գործելակարգերին առնչվող հարցեր: Մասնակիցները նաև քննարկեցին Հարավային Կովկասի երկրներում լրատվամիջոցների հետ կապված վերջին զարգացումները: Ընդ որում, համաժողովի ընթացքում քննարկվեցին առցանց և սոցիալական լրատվամիջոցների հետ կապված իրավական մարտահրավերները և քաղաքականությունը, թվային լրատվամիջոցների զարգացման միտումները և առցանց լրատվամիջոցների հեռանկարները:

Համաժողովը

1. Ողջունեց այն փաստը, որ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ինչպես նաև գիտաշխատողները կարողացան մասնակցել համաժողովին և տարածաշրջանային մակարդակով քննարկել առցանց և սոցիալական

լրատվամիջոցների ոլորտին առնչվող կարևոր հարցեր՝ պահպանելով համագործակցության և վստահության ոգին:

2. Ընդունեց, որ առցանց և ավանդական լրատվամիջոցները հնարավորություններ են տալիս ամրապնդելու մամուլի ազատության ոլորտում ԵԱՀԿ մասնակից պետությունների պարտավորությունների կատարումը:

3. Ողջունեց այն փաստը, որ առցանց լրատվամիջոցները ավելի մեծ բազմազանության և բազմակարծության հնարավորություն են տալիս և ընդունեց, որ լայնաշերտ ինտերնետի մատչելիությունը պետք է խթնել:

4. Ընդգծեց ինտերնետային առաջարկների, այդ թվում՝ կրթության, տնտեսության, առանձին հաղորդակցությունների առաջխաղացումների իրական օգուտները և ընդունեցին դրա կարևորությունը՝ որպես տեղեկություններ փնտրելու, պատրաստելու, ստանալու և տարածելու գործիք:

5. Կոչ արեց կառավարություններին ապահովել խոսքի ազատության և տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքները՝ ընդունելով օրենքներ, քաղաքականություն և գործելաոճեր, որոնք խթանում, այլ ոչ թե սահմանափակում են այդ իրավունքները և ապահովելով դրանց կատարման նկատմամբ անկախ դատական վերահսկողություն և արդյունավետ հանրային հսկողություն:

6. Ընդգծեց, որ ինտերնետում ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումներն ընդունելի են միայն այն դեպքում, եթե դրանք համապատասխանում են ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջազգային իրավունքի նորմերին և ստանդարտներին, սահմանված են օրենքով և բխում են հանրային շահերից:

7. Հույս հայտնվեց, որ ազգային օրենքները պետք է խթանեն ինտերնետի, այդ թվում՝ առցանց լրատվամիջոցների շիտակություն և թափանցիկություն:

8. Հորդորեց կառավարություններին դիտարկել ինտերնետի և դրա ծառայությունների, այդ թվում՝ սոցիալական լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի մատչելիությունը և օգտագործումը, ինչը մարդու հիմնական իրավունքների, այդ թվում՝ խոսքի ազատության իրավունքի նախապայման է և խթանել դրա համընդհանուր հասանելիությունը:

9. Հորդորեց ամրապնդել կառավարությունների շահագրգիռ տարբեր կողմերի գործակցությունը համապատասխան բոլոր կողմերի հետ՝ ծածկելու բնակչության տարբեր խմբերի շրջանում «թվային բաժանումը», խթանել այս նոր միջոցի օգտագործման վերաբերյալ կրթությունը և բարձրացնել ինտերնետի ընդհանուր մատչելիությունը:

10. Հորդորեց հեռահաղորդակցության ընկերություններին պահպանել ցանցի չեզոքությունը, ապահովել, որպեսզի առցանց տեղեկատվության և թրաֆիկի նկատմամբ լինի հավասար վերաբերմունք՝ անկախ դրա միջոցից, բովանդակությունից, հեղինակից, ծագումից կամ նպատակից, ինչպես նաև ապահովել դրանց սեփականության վերաբերյալ տեղեկությունների թափանցիկությունը:

11. Ճանաչեց ակտիվ դերը, որ օգտատերերը պետք է ստանձնեն բովանդակության ձևավորման գործում՝ դրանով իրականացնելով ազատ արտահայտվելու իրենց իրավունքը:

12. Կոչ արեց իշխանություններին բարձրացնել սոցիալական լրատվական գործիքների օգտագործումը՝ խթանելու կառավարության տիրապետած տեղեկությունների և հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկությունների թափանցիկությունն ու դյուրացնելու քաղաքացիների համար դրանց հասանելիությունը, ինչպես նաև բարձրացնել պաշտոնատար անձանց հաշվետվողականությունը:

13.Կոչ արեց կառավարություններին համագործակցել քաղաքացիական հասարակության և հեռահաղորդակցության ընկերությունների հետ՝ ապահովելու, որպեսզի ինտերնետը շարունակի բաց ֆորում հանդիսանալ հասարակական բանավեճերի համար ու օգտատերերի իրավունքները պաշտպանվեն:

14. Ընդգծեց, որ իրենց իրավունքներից լիարժեք օգտվելու համար, ինտերնետից օգտվողները պետք է պաշտպանված լինեն անձնական տվյալների գաղտնիության անօրինական ոտնահարումներից:

15. Կոչ արեց իշխանություններին ապահովել, որպեսզի լրագրողները, ինչպես նաև բլոգերները և «քաղաքացի հաղորդավարները» կարողանան անարգել աշխատել:

16. Կոչ արեց իշխանություններին դադարեցնել բլոգերների և առցանց լրատվամիջոցների ակտիվիստների հետապնդումը:

Թբիլիսի, 11-12 հոկտեմբեր 2012թ.